ժողովուրդ ունի, որոնցից հարիւրը հայեր են, մնացածը Աղրբէջանի թաթարներ են։ Նորա հողաշէն տները շինված են ձորի հարաւային զառիվայրի վերայ, փողոցները ծուռը—մուռ և չափազանց նեղ են։ Նորա բերդը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի քանի պատեր իւրեանց ծածկոցներովը, որոնք շինուած են քաղաքի հիւսիսումը մի չոր հովանաւոր ժայռի տակ, որ պահպանում է Նորան ձիւնից և անձրևից և մեծ արձագանք է տալիս, այնպէս որ շների հաչիւնը սաստիկ աղմուկ է պատճառում քաղաքի մէջ։ Այդ ժայռի անկայուն դոգաւոր լայնութեան վերայ փորված ճանապարհի հետքեր կան։ Տեղ-տեղ էլ քար ու կիր շարուածքներ դեռ մնում են։ Ժայռի ձախակողմը մի այր կայ մօտ երկու հարիւր ոտնաչափ բարձր, ուր մեծ բազմութեամբ ապրում են գիշակեր թռչուններ։ Ականատեսները պատմեցին, որ քանի տարի առաջ, թռչունները իրարու հետ կռուելիս մի գդակ և մի դաշոյն են վեր գցել այնտեղից։ Նորա տակին մի երկաթի մեխ է ցցված ժայռի մէջ։ Ժայռի աջ կողմը դիտակի օգնութեամբ նշմարեցի երեք խաչեր, որոնց տակին հայերէն տառեր էին երևում։ Սա մեր պատմութեան մէջ անուանվում է «Ծակ Մագուայ»։ Ինչպէս երևում է քարայրի արտաքին մասը 1840 թ. սասանութիւնից քանդուել է։

Ամենաշետաքրքրականը այս քաղաքի սառցարանն է, ուր սառոյցը ամառն են պատրաստում։